

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/5

23 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Պլատինիում Կարգո» ՍՊԸ 26.03.2014 թ-ի գրությունը ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում թույլ տրված մեխանիկական սխալի մասին:

«Պլատինիում Կարգո» ՍՊԸ գրությունում բերված փաստարկները.

«Պլատինիում Կարգո» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) 26.03.2014 թ-ի գրությունում մասնավորապես նշված է, որ 06.03.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով դիմում է ներկայացվել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, սակայն 01-01-2013 թ-ի փոխարեն սխալմամբ դիմումում նշվել է 04-03-2013 թ-ը:

Երբ ընկերությունը նկատել է սխալը և փորձել է ուղղում տալ, ծրագիրը թույլ չի տվել, պատճառաբանելով, որ ճշտված դիմում չի ընդունվում:

Լինելով պարտաճանաչ հարկատու, որը ժամանակին կատարում է հարկային պարտավորությունները և ներկայացնում հաշվարկները, ընկերությունը դիմել է Նոր Նորքի հարկային տեսչություն, որպեսզի 01-01-2013 թ-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հաշվառումից չհանվի:

Նոր Նորքի հարկային տեսչությունից հայտնել են, որ հարցին լուծում տալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովին:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հաշվի առնել, որ տեղի է ունեցել մեխանիկական սխալ, որը հանդիսանում է թյուրիմացության արդյունք է, հետևապես 01-01-2013 թ-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը ընկերությունն առաջարկում է հաշվառումից չհանել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Պլատինիում Կարգո» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 06.03.2013 թ-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը 01.01.2013 թ-ի փոխարեն նշվել է 04.03.2013 թ-ը ընկած ժամանակաշրջանը: Ընդ որում հարկ է նշել, որ ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել են 2013 թ-ի ԱԱՀ-ի հաշվարկները:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե

նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:


Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության 26.03.2014 թ-ի գրությամբ բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. «Պլատինիում Կարգո» ՍՊԸ 26.03.2014 թ-ի գրությամբ բերված պահանջը բավարարել:
2. Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը համարել 01.01.2013 թ-ից մինչև օրացուցային տարվա ավարտը:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ